

իմ ուժերը տկար կը զգամ, իր այդ տարրերը վերածելու ճշմարիտ դրուժիւններու: Իմ կէս դարէն աւելին ես տուեր եմ թուրքը հասկնալու տրտում պարտքին:

Երկու աշխարհներու (Կովկասի թուրքին եւ Թուրք-իոյ թուրքին) անհաշտ սա հակադրութիւնը, որ մեր յեղափոխական պայքարին մէջ եղաւ ցաւագին հարց մը, գրիչի եւ սուրի մարդոց իրարմէ այլուրութիւնը, իրարունքհակութիւնն էր: Ընկեր Մաթիկը, իբրեւ մարտիկ, քանի մը օրուան մէջ գտաւ իր Դամասկոսի ճամբան, երբ խաղաղ գեղ մը հասնելուն, աղբիւրին առջեւ, տեսաւ մորթուած դիակները երկու աղջիկներու տասնէն հազիւ վեր ու չորս պատիկներու, բոլորն ալ կացինահար: Այդ մկրտութիւնը այնքան հզօր էր, որ իր ուղեղին մէջ ո՛չ միայն վարագոյրներու պատուուիլը զգաց, այլեւ ընդմիշտ անհետացող, ընկլուզուող երկրամասեր: Անիկա, սարսափագին զայրոյթով մը, ապրեցաւ իր խղճմը-տանքին մեծ քրիզան, այդ անմեղ դիակներուն առջեւ ու խմբագրեց, նոյն գիշերն իսկ, իր առաքելութեան մեծ տոքիւմենտը, որով սկիզբը կը դնէր իր հերձուածին, բիւրոյցի մարդուն եւ երկրին մէջ գործող մարտիկի նկարագիրները իրարու հակադրող: Իր ոճին առատութիւնը, մտածումներուն պարզութիւնը, քարոզին նախնականութիւնը աշխատեցան ի վնաս իր դատին: Գրասենեակի եւ գործատեղիի մարդերը իրարմէ կը տարբերին գրեթէ ամէն գետիններու վրայ: Մաթիկը ձգուեցաւ իր ուտո-պլիաներուն, ստացաւ կազմակերպչական գերագոյն մարմինէն լուրջ ազդարարութիւն, հրաւիրուեցաւ իր երդումը յարգելու մա՛նաւանդ կուսակցութեան գերագոյն պատգամը, - կարգապահական սարքը, որուն դէմ ամէն ընդվզում կը պատժուէր անխնայ: Կարճառօտ մարդերը, կարճ, բայց հաստ սկզբունքներու մարդեր եղած են: Այդ հիման վրայ էր, որ ընկեր Մաթիկը քաշուեցաւ զինքը զինուորագրող կազմակերպութենէն, հոգիին խորունկ բեկումով ու ցաւով, բայց աւելի քան հաւատաւոր իր ժողովուրդի դատին: Ժընեւ, Լոնտոն, Փարիզ, Թիֆլիս.